

Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ծնորհալի հայրապետին երջանիկ փոխման ութերորդ դարադարձը պատեհագոյն առիթն է անդամ մը եւս մօտէն քննելու այն լուսաշող դէմքը, որ ԺԲ. դարուն, Հայոց պատմական անցեալի այդ դժուարին օրերուն, նախախնամութենէն ղրկուեցաւ լուսաւորելու հոգիները, մխիթարելու արմատախիլ եղած հայ ժողովուրդի դաւաճները, պայծառացնելու Հայաստանեայց եկեղեցին եւ խմբելու հայազգի ցրուած հօտը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԸ

Ներսէս, իր եղբօր Գրիգորիս Պահլաւունի կաթողիկոսին հետ, Մեսրոպի եւ Սահակի նման, փրկարար դեր խաղաց մեր պատմութեան այդ փոթորկոտ շրջանին: Նման էին պարագաները: Հինգերորդ դարուն Հայոց թագաւորութիւնը իր անկախութիւնը կորսնցուցած էր եւ երկիրը բաժնուած երկու հօր պետութիւններու միջեւ ու անոնց ենթարկուած: Եւ եթէ Մեսրոպ Մաշտոց չհնարէր հայ դիրքը եւ Սահակի հետ չյաջողէր յեղաշրջել հայ եկեղեցւոյ ծիսական լեզուն եւ անով պարտաւորել որ հայ եկեղեցականը սորվի հայերէնը եւ արտայայտուի այդ լեզուով, հայ ժողովուրդը դիւրաւ պիտի կորսնցնէր իր ինքնութիւնը, մանաւանդ որ երկու պետութիւններն ալ այդ ուղղութեամբ ամէն ճնշում կը բանեցնէին թէ՛ քաղաքական եւ թէ՛ կրօնական մարզերու մէջ:

Տասնմէկերորդ դարուն ալ նման վտանգ կ'անցընէր հայ ժողովուրդը: Այս անգամ ալ մեր անկախութիւնը կորսուեցաւ, Արծրունեաց եւ Բագրատունեաց թագաւորութիւններու ջնջումով. եւ Հայաստան դարձեալ երկու հակամարտ թշնամիներու միջեւ բաժնուեցաւ. մէկ կողմէն բիւզանդական կայսրութեան տիրապետութեան ենթարկուելով, միւս կողմէն ալ սելճուքեան հրոսակներու արշաւանքներուն, որոնք տակաւ առ տակաւ սկսան դրաւել հայ ժողովուրդի

բնիկ երկիրը, եւ ան պարտաւորուեցաւ դադարել դէպի արեւմտեան օտար աշխարհներ:

Բիւզանդական քաղաքականութեան սխալ եւ անհեռատես մտայնութիւնը կը քաջալերէր հայ թագաւորները եւ իշխանները, որ թողուն իրենց երկիրը՝ չկարենալով պաշտպանել Սելճուքներու դէմ, եւ փոխադրուին բիւզանդական հողամասի վրայ: Ասով կը կարծէր թէ ընդարձակած պիտի ըլլար իր սահմանները աժան դինով: Քաղաքական այս սխալ մտայնութիւնը անշուշտ արդիւնք էր կայսերապատմութեան եւ տիրակալութեան անյադ տենչին, որ կ'առաջնորդէր զիրենք նաեւ կրօնական ասպարէզի մէջ: Բիւզանդացի կայսրն ալ ինքզինքը կը նկատէր իր հպատակներուն կրօնական պետը եւ պատասխանատուն. ու կ'երազէր երկար ատենէ ի վեր, Տիեզերական Պատրիարքին գերիշխանութիւնը տարածել Արեւելքի բոլոր եկեղեցիներուն վրայ, ինչպէս սահմանած էր Քաղկեդոնի չվաւերացուած 28րդ կանոնը¹: Ասկէ կու գար այն կրօնական մոլեռանդ անհանդուրժողութիւնը հանդէպ հայ եկեղեցւոյ, որ իրեն հպատակ ու ենթակայ էր եւ դաւանական ու ծիսական տարբերութիւններ ալ ունէր: Ուստի, Հայոց թագաւորութիւնը եւ անկախ իշխանութիւնները ջնջելէ ետք, կը հետապնդէր հայ եկեղեցին ու անոր Հայրապետը իրեն ենթարկել:

Պետրոս Կաթողիկոս, մին այն անհեռատես քաղաքականութեան հեղինակներէն, որոնք Անին Կայսեր յանձնեցին, անդրադարձաւ թէ իր ալ կարգը եկած էր Բիւզանդիոնի ենթարկուելու: Այս անգամ խոհականութիւնը ունեցաւ, ոչ միայն զգուշանալու, այլ նաեւ մահէն առաջ կանխեց ապահովել իր յաջորդին ընտրութիւնը, իր քեռորդին նստեցնելով հայրապետական աթոռին վրայ: Ասով խաչիկ Բ. կրցաւ յաջորդել Պետրոսի, բայց ստիպուեցաւ երթալ Կ. Պոլիս եւ կայսեր ճնշումներուն արիւթար դիմադրեց երեք տարի, մինչեւ որ հայ իշխաններու միջամտութեամբ կայսրը թոյլ տուաւ որ երթայ Թաւրուր եւ աքսորի մէջ ապրի կեանքի վերջին երեք տարիները: Իր վեցամեայ կաթողիկոսական պաշտօնավարութիւնը յայսպէս կը համառօտէ Մ. Ուռհայեցին. «Սա կեցեալ յաթոռ հայրապետութեան դամ

1. HEFELE, Histoire des Conciles, Paris, 1908, t. II, 2ème partie, pp. 815-8.

Թիւեալ կանոնը կ'ուզէ որ Կ. Պոլսոյ եկեղեցին, իրբեւ կայսերական մայրաքաղաքի եկեղեցին, ունենայ Հին Հռոմի եկեղեցիին առանձնաշնորհումները, գլխաւորը դառնալով բոլոր Արեւելքի եկեղեցիներուն: Այսու Թրակիոյ, Ասիոյ եւ Պոնտոսի մետրապոլիտները եւ անոնց ենթակայ թեմերու եպիսկոպոսները պէտք է Կ. Պոլսոյ պատրիարքէն առնեն իրենց ձեռնադրութիւնը: Հռոմի եկեղեցին չվաւերացուց այս կանոնը: Բայց այս կանոնին հիման վրայ Կ. Պոլսոյ եկեղեցին միշտ պահանջեց որ Հայոց Կաթողիկոսը իր ձեռնադրութիւնը իրմէ առնէր, ինչ որ երբեք չիրականացաւ:

վեց յօտար աշխարհի, պանդխտեալ յիշխանութեան յունաց, եւ բազում վիշտս կրեաց ի յանիրաւ եւ ի մոլի աղբէն հոռոմոց ի մէջ Կոստանդինուպոլսի: Որ եւ ի պէս պէս փորձութիւնս ածէին զնա վասն հաւատոց...»²: Ասկէ կը տեսնուի թէ կայսրը ամէն միջոցի ղրմած էր իրեն ենթարկելու Հայոց կաթողիկոսը, մինչեւ իսկ դաւանական հարցերու մէջ պահանջելով հպատակութիւն. բայց ան մերժած ու ղրմադրած էր:

Սակայն Կոստանդին Ժ. Տուկիժ կայսրը, որոշած էր վերջ տալ հայ ինքնավար կաթողիկոսութեան, ինչպէս նոյն պատմիչը կը հաւաստէ. «Կամեցաւ բառնալ եւ խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց»³: Ուստի Խաչիկի մահէն ետք՝ այլ եւս չթոյլատրեց որ Հայերը նոր կաթողիկոս կարենան ընտրել, եւ աթոռը եօթը տարի թափուր մնաց, կ'ըսէ Շնորհալիի անանուն կենսագիրը⁴: Բայց ահա Կարսի հայ թաղաւորը, Գաղիկ Աբասեան, զոհելով իր միակ մնացած անկախ իշխանութիւնը, կայսեր յանձնեց Կարս քաղաքը, եւ փոխարէն ստացաւ Ծամբնդաւ քաղաքը եւ չըջակայ հողեր, ու նաեւ նոր կաթողիկոս ընտրելու իրաւունքը: Ժողովքը գումարուեցաւ Ծամբնդաւի մէջ եւ ընտրուեցաւ Գրիգոր Մաղիստրոսի որդին, Վահրամ, որ հօր անունը առնելով կոչուեցաւ Գրիգորիս⁵:

Յաջող էր ընտրութիւնը ամէն տեսակէտով: Գրիգոր Մաղիստրոս Բիւզանդիոնի արքունիքին հաւատարիմ ու սիրելի անձնաւորութիւն մը եղած էր, եւ իբրեւ Պահլաւունի ընտանիքի անդամ՝ հայ ժողովուրդին եւ եկեղեցիին արդիւնաւոր եւ հարազատ զաւակը: Ուստի անոր որդւոյն ընտրութիւնը պիտի գոհացնէր թէ՛ Բիւզանդիոնը, քանի որ տակաւին կայսերական հողի վրայ կը կատարուէր ընտրութիւնը, եւ թէ հայ ժողովուրդը, որ ակնկալութեամբ կը սպասէր հայրապետական աթոռը վերանորոգողի մը:

Եթէ Գրիգոր վկայասէր չյաջողեցաւ վերակենդանացնել կաթողիկոսական աթոռին նախկին փառքը, սակայն անոր մեծ արդիւնքը եղաւ պահպանել հայրենի աւանդը՝ փոխանցելու համար իր թոռներուն, Գրիգորիսի եւ Ներսէսի, որոնց վերապահուած էր իրականացնել այդ գործը:

2. ՄԱՏԹԻՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 153:

3. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Անդ, էջ 137:

4. Սրբոյն Ներսէսի Շնորհալի Պատմութիւն վարուց, Սոփերք Հայկականք, ԺԴ. Վենետիկ, 1854, էջ 17: Ուսհայեցիի Ժամանակագրութեան համաձայն Խաչիկ Բ.ի մահէն հաղիւ տարի մը անցած կ'ընտրուի յաջորդը Գրիգորիս Վկայասէր. ուստի Ներսէսի վարքին մէջ ըսուածը, կա'մ պէտք է իմանալ ամիսս Խօթն, կամ ալ նկատի չառնել Խաչիկի պաշտօնավարութեան տարիները, որովհետեւ խափանուած էր Յունաց կայսեր հալածանքով:

5. Վարդ Ներսէսի, Սոփերք ԺԴ, էջ 17-18:



Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Հրտ. Հ. Ղ. Ալիշան («Շնորհալի և Պարագայ իւր», 1873)

Արդարեւ Վկայասէրի կաթողիկոսութեան շրջանը շատ անընդամստ պայմաններու տակ կը գտնուէր: Հայ ժողովուրդի տեղափոխման եւ դադրի ժամանակն էր, եւ հայրապետական աթոռն ալ նոյն բախտին վիճակակից եղաւ: Գրիգոր Վկայասէր ընտրուեցաւ օտարութեան մէջ, Ծամբնդաւ, ուր տարի մը մնալէ ետք՝ սկսաւ շրջիլ զանազան վայրեր, ուր իր հօտը կը գտնուէր: Ներսէսի անանուն կենսագիրը կը գրէ թէ գնաց Երուսաղէմ, անկէ անցաւ Արեւմուտք, «ուր աղբ բաղում Հայոց իջեալ էին»⁶ կ'ըսէ, կրկնելով Ծնորհալիին խօսքերը:

«Յարեւմտականսն ժամանեալ
Ուր աղբ Հայոց բաղում իջեալ»⁷:

Անկէ եկաւ Կ. Պոլիս, ուր պատուով ընդունուեցաւ թէ՛ Կայսեր եւ թէ՛ Պատրիարքին կողմէ, որոնք կարծես մոռցնել կ'ուզէին տալ իր նախորդին կրած նախատինքը եւ անիրաւութիւնները: Ասկէ անցաւ Եգիպտոս, ուր աւելի եւս պատիւ եւ իշխանութիւն ստացաւ, շնորհիւ իր քեռորդւոյն, Գրիգոր Եպիսկոպոսի ճարտարութեան: Խալիֆան այնքան համակրանք ցոյց տուաւ, որ չթողուց անոր մեկնումը, այլ հրաւիրեց որ հոն մնայ եւ տեղւոյն վրայ նոր հաստատուած Հայ դպրութիւնը հովուէ: Այս պատճառով Եգիպտոս ալ կաթողիկոսական աթոռ նկատուած է այս շրջանիս: Սակայն Գրիգոր վկայասէր իրեն փոխանորդ կարգելով իր քեռորդին՝ մեկնեցաւ հայրենիք:

Այսպէս ոչ միայն կաթողիկոսական աթոռը պանդուխտ եւ աստանդական վիճակ մը ունէր, այլ նաեւ չորսի բաժնուած էր, ինչպէս կը գրէ Ուռհայեցին. «Ահա ի ժամանակիս յայսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տէր Վահրամ յեգիպտոս, եւ Տէր Թէոդորոս ի Հոնին, եւ Տէր Բարսեղ ի Թաղաւորական քաղաքն Հայոց յԱնի, եւ Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն: Եւ սոքա իւրաքանչիւր ոք առնէին ձեռնադրութիւնս եւ օծանէին եպիսկոպոսունս եւ տային օրհնութիւն սուրբ ձիթոյն»⁸:

Բայց այս տխուր կացութիւնը սկսաւ բարւոքիլ ԺԱ. դարու վերջերը, երբ Գող Վասիլ իշխանը, Փիլարտոսի զօրավարներէն մին, անոր մահէն ետք՝ դրաւելով Քեսոունի շրջակայ երկիրը մինչեւ Հոռմկլայ, կաղմեց անկախ իշխանութիւն մը, եւ իր շուրջ հաւաքուեցան բազմաթիւ հայ իշխաններ և եկեղեցականներ, որոնք փախստական իրենց երկիրներէն՝ ապաւինեցան անոր հովանաւորութեան: Վասիլ տեսնելով թէ իր իշխանութիւնը հետզհետէ կը հաստատուի, իր մօտ հրաւիրեց

6. Վարդ Ներսէսի, Սոփերք ԺԴ, էջ 20-21:

7. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, Բաճի չափաւ, Վենետիկ, 1928, էջ 594:

8. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԱՅՊ, էջ 229-230:

Մեր հեղինակները իրենց այս եղրակացութեան համար նկատի առած են Ծով դղեակ կաթողիկոսարանի մասին ըստածները միայն, ու կ'ենթադրեն թէ նոյն դղեակը եղած ըլլայ նաեւ Ծնորհալիի ծննդավայրը: Բայց հարցը հոս է թէ արդեօք Ծով դղեակ կաթողիկոսարանը եւ Ապիրատի բնակած Ծովք դղեակը նոյնացնելու համար կա՞ն փաստեր թէ ոչ: Բնականաբար, որքան ատեն խօսքը կաթողիկոսարանի մասին է, եղած նոր ուսումնասիրութիւնները դրական են. բայց մեզի նոյնքան վստահելի չեն թուիր Ծնորհալիի ծննդավայրը նոյնացնել Ծով դղեակ կաթողիկոսարանի հետ, որովհետեւ այդ մասին ոչ միայն բացայայտ վկայութիւններ կը պակսին, այլ կան փաստեր՝ որոնք երկու Ծովք դղեակի գոյութիւնը կը հաստատեն:

Ծով դղեակը Մարաշի կողմերը դնող կամ Տլուք դաւառի մէջ գետեղող վկայութիւնները՝ կաթողիկոսարանի մասին միայն կը խօսին: Այսպէս անոնց առաջինը եւ գլխաւորը, Ծնորհալիի Բան Հաւատոյ դրութեան յիշատակարանը, կ'ըսէ.

«Իսկ Հայրապետն հանուրց Հայոց
Անուն զուարթուն Գրիգորիոս,
Ժառանգ նախնոյն սուրբ աթոռոց
Անուանակիր սեռ ազգայնոց,
Ի Ծով անուն դղեկէն ելեալ
Զոր սեպհական ինքեան շինեալ»²⁰:

Վերջին երկու տողերուն մէջ կը շեշտուի թէ Ծով դղեակը, որմէ կը ստիպուին ելլել Մասուտ սուլտանին յարձակումներէն նեղուած, Գրիգորիոս Կաթողիկոս գնած էր եւ իրեն համար շինած սեպհական բնակութիւն: Այս նկատողութիւնը մեզ առաջնորդեց տարակուսելու թէ սոյն դղեակը նախապէս գոյութիւն ունեցած ըլլայ իբրեւ հայրենի ժառանգութիւնը Գրիգորիոսի, որ կրկին ձեռք ձգած ըլլայ գնելով: Բայց Ծնորհալիի խօսքերը իրենց բացայայտ մեկնութիւնը կը ստանան Կիլիկիոյ Տարեգիրքի հետեւեալ վկայութեան մէջ, ուր կ'ըսուի թէ Գրիգորիոս վաթսուն հազար դահեկանի գնած է յիշեալ բերդը Անտիոքի իշխանէն, անոր շուրջի տասնհինգ գիւղերուն հետ.

կութիւն ունի, ինչպէս Տայք, Հայք, Գուգարք եւն. ձեւերուն մէջ: Ծովք ալ դաւառի կամ տեղւոյ անուն եղած է, որմէ անցած է մերձակայ լիճին: Միւս կողմէն եթէ նկատի առնենք որ Ժ. Դարուն Անտիոքի իշխանութեան ենթակայ Տլուք դաւառը Մարաշի գէպի հիւսիս չէր երկարեր, պէտք է ըսել թէ Ծով դղեակ Կաթողիկոսարանը չէր կրնար հոն գտնուած ըլլալ. եւ աւելի հաւանական է Այնթապի հիւսիս արեւմտեան կողմը եղած Սօֆի հետ նոյնացումը. ասով աւելի դիւրին կ'ըլլայ հասկնալ նաեւ յիշատակարանի մը բացատրութիւնը Ս. Նշան Ծովուց մերձ ի Հռոմիլայ, քան թէ Մարաշի հիւսիսը տեղաւորելով:

20. ՆԵՐՍԷՍ ԵՆՈՐԶԱԼԻ, Բան Հաւատոյ, Բանք չափաւ, Ամք, էջ 241:

«Զայնու ժամանակաւ (1140ի ատեն) սուրբ կաթողիկոսն Հայոց, Տէր Գրիգորիոս, կայր ի փոքրագոյն դղեակն Ծովք, ի սահման Տլուք, զոր ստացեալ էր սուրբ Հայրապետն գնաց ի Բրինձէն Անտիոքայ, եւ ԺԵ գեղ շուրջ, ի Կիլի դահեկան»²¹: Այս վկայութիւնը բոլորովին տարհամոզեց մեզ որ Գրիգորիոս կաթողիկոսի գնած եւ սեփականութեան վերածած Ծով դղեակ կաթողիկոսարանը՝ նոյն եղած ըլլայ իրենց հայրենի ժառանգութեան հետ, որ նոյնպէս Ծովք կը կոչուէր, որմէ սակայն տարամերժ դուրս ելած էին՝ իրենց հօր աղետալի մահէն ետք, ինչպէս կ'ըսէ Ծնորհալին.

Ի հայրենեաց տարամերժեալ
Օտար սեռից ըստըկացեալ:

Այս նկատողութենէն ետք՝ երբ ձեռք առնենք հետեւեալ յիշատակարանները, պիտի տեսնենք թէ Խարբերդի մօտիկ Ծովք դղեակը եղած է իրապէս Ապիրատի սեփականութիւնը եւ հոն ծնած են երկու եղբայրները, Գրիգորիոս եւ Ներսէս: Արդարեւ հետեւեալ յիշատակարանը, որ Գրիգոր Վկայասէրի մասին կը խօսի, կ'անդրադառնայ անոր ըրած ճամբորդութիւններուն վրայ, եւ հոսակ իր քեռորդոյն Բարսեղի մասին, որ ինք ձեռնադրեց նախ արքեպիսկոպոս եւ ապա կաթողիկոս կարգեց Անի մայրաքաղաքին համար. «Եւ ինքն Հոգեւոր Տէրն Գրիգորիոս եկն յարեւելս, զի մայրն դեռ եւս կենդանի էր ի բերդն Դարօնից, եւ օրհնեաց զմիւս քեռորդին իւր զՏէր Բարսեղ ի բերդն Դարօնից, եւ օրհնեաց զմիւս քեռորդին իւր զՏէր Բարսեղ եղեւ ի ԵՃԼԲ (1083) թուին: Նստաւ Տէր Բարսեղն յաթոռն հայրապետական յԱնի, հրամանաւ քեռոյն իւրոյ, Տէր Գրիգորիոսի Վկայասիրի, եւ օծմամբ Տէր Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի: Եւ յԱնի քաղաքն: Իսկ յաղմկաց այլազգեաց եւ ի խռովութենէ ժամանակին փախեալ Տէր Բարսեղն յԱնուոյ, եւ եկեալ յԱղթամար: Եւ յետ տարւոյ միոյ ել եւ գնաց յԱթախ եւ ի Հէնի, յԱկլի եւ յԱրդնի, զի կային անդ հայ իշխանք, առ որս գնաց հայրապետն ի տեսանել զնոսա եւ դառնալ: Եւ նոքա աղաչանօք արդելին զՀոգեւոր Տէրն առ ինքեան»²²: Այս յիշատակարանի մէջ կարեւոր է նկատել թէ Բարսեղ Կաթողիկոս Անին կը թողու պատերազմական խռովութիւններու պատճառով, եւ կու դայ արեւմուտք, ուր հայ իշխաններ կային: Առաջին կայանը եղաւ Աղթամար, որ տարի մը ետք թողուց եւ անցաւ Խարբերդի դաւառի հարաւային կողմերը, Աթախ, Հէնի, Ակլ եւ Արդնի, որոնք նոյն շրջանին կարեւոր կեդրոններ պէտք էին եղած ըլլալ, եւ ըստ յիշատակարանին՝ բնակուած էին հայ իշխաններէ:

21. ՍՄՐԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 161:

22. Գ. ՅՈՎԷԹԵԱՆՅԱՆ, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիքիս, 1951, էջ 420:

Տեսանք թէ Գրիգոր Մաղիստրոս Յունաց կայսրէն իրեն կալուած եւ կառավարական շրջան ստացաւ հայկական Միջագետքը եւ Տարօնն ու Վասպուրականը, ուր տեղացի հայ իշխանները աւելի ապահով վիճակ մը ունեցան անոր հովանիին տակ: Այդ իշխաններէն մին ամուսնացաւ անոր աղջկան հետ, որոնցմէ ծնաւ Ապիրատ Պահլաւունին, հայրը Ներսէսի:

Հետեւեալ յիշատակարանը, գրուած 1106ին, Շնորհալիի ծննդէնէն քանի մը տարի ետք, աւելի բացայայտօրէն կը պատմէ թէ Բարսեղ Կաթողիկոս եկած ու բնակած է Չորրորդ Հայքի սահմաններուն մէջ գտնուող Ծովք գղեակի մէջ: Ահա յիշատակարանի վկայութիւնը.

«Ի թուականիս Հայոց ԾԾԵ (1106), յորում տարամերժեալ էր սուրբ Հայրապետն Տէր Բարսեղ ի բուն աշխարհէն եւ յաթոռոյն իւրոյ սեփականէ, եւ իջեալ բնակէր ի սահմանս Չորրորդ Հայոց, ի դիպելին Ծովք անուն, զնաց յաշխարհն Կիլիկեցւոց եւ եմուտ ի Սեաւ լեռան, ուր բազում վանորայք էին մերում ազգիս եւ այլոց ազգաց, յունաց եւ Փրանկաց եւ ասորոց: Եւ յայնմ ժամանակի հալածումն հհաս աշխարհիս Հայոց ի յանօրէն ազգէն թուրքաց եւ բազում դաւառք եւ վանորայք աւերեցան եւ մնացեալքն փախստական լինէին»²³:

Այս յիշատակարանին մէջ յայտնի է Ծովք գղեակին տեղադրական դիրքը, այսինքն է՝ ի սահմանս Չորրորդ Հայոց, ինչ որ Խարբերդի գաւառին Ծովք լճակին մերձակայ բերդը միայն կրնայ ըլլալ, ուր ապաստանած էր Բարսեղ Կաթողիկոս՝ իր աթոռանիստ Անին թողլէն ետք: Այդ, այս երկու յիշատակարաններու վկայութիւնները իրարու միացնելով կ'իմանանք թէ Բարսեղ Կաթողիկոս Անին թողլով եկած էր Աղթամար, ուր տարի մը մնալէ ետք, իջած էր Չորրորդ Հայքի սահմաններուն մէջ գտնուող հայ իշխաններու այցելութեան. եւ անոնց աղերսանքին ընդառաջելով՝ յանձն առած էր իր բնակութիւնը հաստատել նոյն գաւառի մէջ գտնուող Ծովք գղեակին մէջ: Ի՞նչ կըրնար ըլլալ այս ընտրութեան պատճառը, եթէ ոչ ազգականական այն կապը որ կար իշխեալ գղեակին տէր՝ Ապիրատ իշխանին եւ Բարսեղ Կաթողիկոսի միջեւ, որոնք երկու քոյրերու գաւառներ էին. եւ բնական էր որ Բարսեղ նախընտրութիւն տար Պահլաւունի իշխանին մօտ բնակիլ: Ուրեմն, վերի յիշատակարաններու վերլուծումը մեզ կ'առաջնորդէ եզրակացնելու՝ թէ Ապիրատ իշխանը Չորրորդ Հայքի մէջ գտնուող Ծովք գղեակին տէրն էր, ուր ծնան Ներսէս Շնորհալին, եւ բնականաբար նաեւ իր երէց եղբայրը Գրիգորիս: Ու երբ Բարսեղ եկաւ հոն հաստատելու իր բնակութիւնը, նոյն ատենները տեսաւ նորածին Ներսէսը:

23. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, Անդ, էջ 303:

Ներսէս Շնորհալիի ծննդեան թուականը 1102ին կը դնէ Ալիշան, առանց վկայութիւն մը բերելու. արդեօք լոկ կռահող մըն էր, որով ուզած էր կապել 302 թուականին, զոր ինք Հայոց դարձի թուական կը համարէ²⁴: Մինչ Օրմանեան 1100ին կը դնէ, չունենալով յատուկ փաստ մը, բայց եթէ իր երէց եղբորմէ չորս հինգ տարի փոքր ըլլալուն պարագան²⁵: Սակայն կայ յիշատակարան մը, որ կու գայ հարցը վճռելու ի նպաստ 1102 թուականին, որովհետեւ ըստ այդ վկայութեան, Ներսէս վախճանեցաւ ՀԱՍՏԱՄԱՍ 71 տարեկանին, որմէ բնականօրէն կը հետեւի թէ ծնած ըլլայ 1102ին:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍԻ

Իշխանական ու բարեպաշտ ընտանիքի մը զաւակն էր Ներսէս: Հայրը քաջ զօրական մը, տէր էր հինգ գաւառներու, որոնցմէ չորսը մանչեր, Գրիգորիս, Վասիլ, Ներսէս եւ Զօրավար կամ Ծահան, ու մին աղջիկ՝ Մարիամ: Ներսէս իր հօր մասին զեղեցիկ պատկեր մը տուած է, նկարագրելով անոր հոգեկան ու մարմնական ձիւքերը, մահուան պարագաները պատմած միջոց.

«Քանզի գըթած Հայրըն խոովեալ
Զմեր ըստ մարմնոյ Հայրըն բարձեալ
Զպահլաւունին աղաւ սերեալ
Աստուածային շնորհօք լըցեալ.
Եւ երկիւղիւն զարդարեալ,
Գեղապաճոյճ անձն երեւեալ
Իշխանութեամբ չըքեղացեալ.
Ըղնախնական անուն առեալ
Որ Ապիրատ էր կոչեցեալ.
Թոռըն մեծին Գրիգորի լեալ
Որ Մաղիստրոս մականուանեալ»²⁷:

Ուրեմն, Ներսէսի հայրն ալ Պահլաւունի իշխանազուն մըն էր եւ մեծ հօրը անունը կը կրէր, այսինքն Հասանի որդի Գրիգոր Ապիրատ իշխանին անունը, որուն թոռն էր հօր կողմէն եւ մօր կողմէն ալ Գրիգոր Մաղիստրոսին: Զարմանալի է որ Ներսէս իր եղբայրներուն եւ քրոջը անունը միշտ արձանագրած ըլլալով հանդերձ իր գրութեանց յիշատակարաններուն մէջ, երբեք չի յիշատակեր իր մօր անունը.

24. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 45:

25. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Ա, էջ 1399:

26. Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ, Անդ, էջ 418:

27. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, Անդ, էջ 601:

Ահա այսպես, մինչ Գրիգորիս կը յառաջանայ մինչեւ քահանայութեան, Ներսէս կը մնայ իր ընտանիքին մէջ, մօր գուրգուրանքին տակ: Բայց ահա հօրը եղբերական մահը կու գայ խանդարելու ընտանեկան այս քաղցր բոյնը, եւ ինքն ալ կը ստիպուի ելլել հայրենի տունէն եւ պանդխտանալ օտարութեան մէջ:

«Քանզի զհովիւն քաջ հարեալ
Ձգառինսն դայլք յափշտակեալ.
Ի հայրենեաց տարամերժեալ
Օտար սեռից ըստըրկացեալ»³⁴:

Հ. Ալիշանի համաձայն այս դէպքը պատահած է 1111ին: Արդարեւ Ներսէս Շնորհալի, յետ յիշելու իր եղբոր քահանայական ձեռնադրութիւնը, որ հաւանաբար այս ատենները եղած պիտի ըլլայ, երբ արդէն 16 տարեկան էր, կ'աւելցնէ.

«Լուր դառնութեան եղեւ հնչեալ
Եւ ձայն գուժի Հռամայ հասեալ,
Քանզի զթած Հայրըն խռովեալ
Ձմեր ըստ մարմնոյ հայրըն բարձեալ»³⁵:

Ներսէսի կսկիծը մեծ է այս աղետալի դէպքին վերջիչումովն անգամ, բայց համակամ՝ քրիստոնէական իր հաւատքով, քանի որ դրժած Հայրն է որ այդպէս ուզած է: Հօր մահուան բոլոր մանրամասնութիւնները մտքին մէջ տպաւորուած՝ ան կ'արձանագրէ յաջորդէջերուն մէջ, որմէ կ'երեւի թէ ինքն ալ, թէպէտ ինը տարեկան մանուկ, ներկայ եղած է եւ շատ բան յիշողութեան մէջ պահած: Այս դէպքը պատճառ կ'ըլլայ որ ընտանիքով թողու հայրենի տունը եւ օտարութեան մէջ գտնէ իր ապաստանարանը: Ալիշան կ'ենթադրէ որ Գող Վասիլի մօտ ապաւինած ըլլայ, քանի որ իր մեծ եղբայրն ալ Գրիգորիս՝ Կարմիր վանք կը գտնուէր եւ Բարսեղ կաթողիկոսի հովանաւորութեան տակ կը կրթուէր: Եւ ան հիմա արդէն արեղայ ձեռնադրուած, նոյն վանքի միաբաններէն եղած էր: Ուստի երբ պատանի Ներսէս իր մօր եւ եղբայրներուն հետ եկաւ Քեսուն, ինք առաջնորդեց ու տեղաւորեց զիրենք Վասիլ իշխանին մօտ եւ Բարսեղ կաթողիկոս զիրենք հովանաւորեց իբրեւ հայր մը, ինչպէս կը գրէ Շնորհալին: Այս առթիւ պէտք է որ Ներսէս ալ վանք մտած ըլլայ, հազիւ իննամեայ, իր եղբոր ուղիէն քալելու համար:

Ներսէս Լամբրոնացի, Շնորհալիի նուիրած ներբողեան քերթուածին մէջ բացայայտօրէն անոր երէց եղբոր Գրիգորիսի կը վերագրէ

34. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Ամդ, էջ 604:

35. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Ամդ, էջ 601:

Ներսէսի վանք մտնելու եւ եկեղեցական ասպարէզին նուիրուելուն պատասխանատուութիւնը:

«Տէր Գրիգորիս, որ երկրորդէ,
Ի պատուական սուրբ իւր զարմէ
Ձայս հարազատ եղբայրս ընտրէ.
Ի յըստընդեայ փոքր հասակէ
Ի միանձանց սըրբոց կոչէ,
Դաստիարակ ուսման կարգէ
Ներսէս զանուն նախնոյն կոչէ,
Եւ իմաստիւք ըզնա վարժէ»³⁶:

Անոր կենսագիրն ալ նոյնը կը գրէ, Գրիգորիսի համար ըսելով. «Կրթէր եւ զեղբայրն Ներսէս ի վարժումն իմաստից յաստուածայնոց տառից եւ կարգէր նմա դաստիարակս արս գիտնականս եւ սուրբս եւ առաքինիս»³⁷: Ուրեմն Ներսէս ինը տարեկանին, իր երէց եղբոր ձեռքով Կարմիր վանք կը մտնէ՝ պատրաստուելու համար եկեղեցական ասպարէզին: Լամբրոնացիի բացատրութիւնը թէ ի յըստընդեայ փոքր հասակէ մտած է միանձնական կեանքին, անշուշտ հեռուորական չափազանցութիւն մըն է, որ նոյն ինքն Շնորհալին ալ իր եղբոր համար գործածած է Վիպասանութեան մէջ. Որ ի ստեմէ գոյով հասեալ – Առ համանուն հօրքն վարժեալ³⁸: Հոս ալ Գրիգորիսի համար ըսուած է թէ ի ստեմէ հասեալ, երբ արդէն ինը տարեկան էր, որ մտաւ Կարմիր վանք իր մեծ մօրեղբոր Գրիգորիս Վիպասէրի խնամքին տակ:

Յաջորդ տարին, այն է 1112ին, կը վախճանէր Վասիլ իշխանն ալ, մեծ սուգի մէջ թողլով իր շուրջ հաւաքուած իշխաններն ու Կաթողիկոսը: Արդարեւ կը գրէ Մատթէոս Ուռհայեցին. «Յայսմ ամի ՇԿԱ (1112) յԱրեղի ամսոյ քսանեւորոս մեռանէր մեծ իշխանն Հայոց, որ կոչեցաւ Գող Վասիլ: Եւ եղեւ սուգ մեծ սաստիկ ամենայն տան Հայոց, վասնզի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն եւ ամենայն ազգն Բագրատունեացն եւ Պահլավունեացն եւ որդիք թագաւորացն Հայոց եւ ամենայն ազգն Պահլավունեացն հանդերձ աղատաբունդ զօրքն Հայոց, առ նա կային հանդուցեալ մեծաւ փառաւորութեամբ: Եւ աթոռ Հայրապետութեան Հայոց առ նա եղաւ»³⁹:

Ասկէ կը տեսնուի թէ Գող Վասիլ իշխանը նոյն ժամանակ կը

36. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Դրուատ պատմագրաբար, ի Սանկտ Պետերբուրգ, 1788, էջ 306: (Տե՛ս Ն. Շնորհալի, Գիրք որ կոչի ընդհանրական):

37. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Վարք, Սոփերք ԺԴ, էջ 32:

38. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բանք չափաւ, Ամդ, էջ 600:

39. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, Ամդ, էջ 323:

նին, Բարսեղ վրդ. մեկնիչ Մարկոսի Աւետարանին, Սարգիս վրդ. մեկնիչ Կաթողիկեայց թուղթերուն, Գրիգորիս Կաթողիկոս եւ Ներսէս Շնորհալին: Այս վերջինս մանաւանդ իսկական պարծանքն է իր ուսուցիչին: Անտարակոյս անոր մէջ կ'արտացոլայ ուսուցիչին աստուածաբանական խոր եւ յստակ գիտութիւնը. ան փոխանցեց իր աշակերտին Հայ Եկեղեցւոյ բաղմադարեան աւանդութիւնը ծիսական, հոգեւորական, դաւանարանական ու տեսական աստուածաբանութեան վերաբերող, զոր Ն. Շնորհալին իրեն յատուկ մտքի յըստակութեամբ եւ հանճարեղ պարզութեամբ գիտցաւ արտայայտել թէ՛ չափածոյ եւ թէ՛ արձակ գրութիւններու մէջ:

Երկար չտեւեց Բարսեղի հովանաւորութիւնը, որովհետեւ յաջորդ տարին իսկ, այն է 1113ին, վրայ հասաւ մահը՝ արկածի մը առթիւ, ինչպէս կը պատմէ նոյն թուականի յիշատակարանը: Բարսեղ իր սովորութեան համաձայն այցի ելած էր հայաշատ կեդրոններ եւ մինչ կը գտնուէր Անձիթի կողմերը, Վարդենի գիւղին մէջ, կիրակնամուտի ժամերգութեան պահուն, որ տեղի կ'ունենար տանիքի մը վրայ, բաղմութեան ծանրութեան տակ տանիքը փլաւ եւ Բարսեղ վար իյնալով՝ կռնակի ողնաշարէն ող մը կոտրեցաւ: Շուտով զինք փոխադրեցին մինչեւ Շուղը անապատ, որ իր կայանն էր, եւ այն երեք օրերուն որ տակաւին ողջ մնաց՝ եպիսկոպոս ձեռնադրեց Գրիգորիսը՝ որ իրեն յաջորդ կարգեց⁴²: Ապա մեռաւ եւ թաղուեցաւ Շուղը անապատ:

Այսպէս անգամ մը եւս որը մնացին Ապիրատի դաւակները, ինչպէս կը գրէ Շնորհալին իր Վիպասանութեան մէջ.

«Այլ յետ սակաւ ամաց անցեալ
Մինչ դեռ տակաւ տարաբերեալ,
Ի միւս հօրէն հոգւոց զըրկեալ,
Բասիլիոսըն կոչեցեալ:
Զի ըստ մեղաց մեր յաճախեալ
Նըմին օրհասըն պատահեալ,
Եւ մեր կըրկին թըշուառացեալ,
Ի փըրկութեանց անյոյս եղեալ»⁴³:

Սակայն Գրիգորիս Կաթողիկոսական իշխանութեամբ յաջորդեց Բարսեղի եւ իր ընտանիքին խնամքը վրան առնելով, իր շուրջ հաւաքեց զանոնք եւ իւրաքանչիւրը տեղաւորեց իր գիրքին համաձայն, այսինքն՝ Վասիլ մեծ եղբայրը իշխան կարգեց, կրտսերը՝ Զօրավար կամ Շահան՝ նմանապէս. Մարիամ քոյրը պսակեց, իսկ Ներսէս



Գծագրիչ՝ Busato, փորագրիչ՝ Viviani
Հրտ. «Հաւատով խոստովանիմ», 1837

42. Գ. ՅՈՎԱՆՔԵԱՆՅ, Ամ, էջ 421:

43. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բանք չափաւ, էջ 604:

սէս եղբայրը ուսման առաջնորդեց եւ մինչեւ անոր քահանայութիւնը խնամեց: Ահա Ներսէսի խօսքերը, իր եղբօր Գրիգորիսի մասին.

«Եւ ըզցըրուալսն ժողովեալ
Ըզմայր որդւովք իւրովք բերկրեալ
ՅԵՐՈՍԱՊԴՅՄ նոր վերածեալ:
Զիւրաքանչիւրս տընօրինեալ
Եւ ըստ բախտի կարգաւորեալ
Զեղբարս ինքեան հարազատեալ:
Յիշխանական դահ յառաջեալ,
Վասիլ անուն վեհ երեւեալ
Եւ Զօրավար համապատուեալ.
Եւ Մարիամ քոյր անուանեալ,
Որ յաշխարհի կարգըս մըտեալ»⁴⁴:

Ներսէսի ըսածներէն կը հետեւի թէ Ապիրատի մահէն ետք, անոր որք մնացած զաւակները իրենց մօր հետ աստանդական կեանք մը վարած են՝ յետ լքելու Ծովք դղեակը: Թէեւ Գող Վասիլ իշխանը զիրենք հիւրասիրեց սկիզբները, բայց կացութիւնը փոխուած ըլլալու էր անոր մահէն ետք: Վասնզի անոր յաջորդեց որդեգիրը, նոյնպէս Վասիլ կոչուած, Կամսարական ընտանիքէ, քսանհինգամեայ պէս Վասիլ կոչուած, Կամսարական ընտանիքէ, քսանհինգամեայ երիտասարդ մը, որ նաեւ Տղայ կոչուած է, բայց քաջ եւ մեծատիրոս, ինչպէս կը կոչէ զինքը Մ. Ուռհայեցին: Անոր յաջորդութիւնը տեղի կ'ունենար Բարսեղ կաթողիկոսի հովանաւորութեամբ եւ օրիական ժողովքով. «Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ եւ տայ նական ժողովքով. «Եւ արար միաբան ժողով Տէր Բարսեղ եւ տայ զամենայն իշխանութիւնն ի Տղայ Վասիլն. եւ եղեւ ուրախութիւն ի վերայ ամենայն տանն Հայոց»⁴⁵: Հակառակ այս օրինական ընտրութեան՝ երկար չտեւեց Վասիլի իշխանութիւնը: Քանի մը տարի ետք (1115ին) Եղեսիոյ Պաղտին իշխանը յարձակեցաւ անոր երկրին վրայ եւ Վասիլ ապաւինեցաւ Լեւոն իշխանին: Բայց ահա անոր եղբայրը, Թորոս, նենդութեամբ կանչեց Վասիլը եւ յանձնեց Պաղտին բայրը, Թորոս, նենդութեամբ կանչեց Վասիլը եւ յանձնեց Պաղտին բայրը: Ասով Պաղտին յաջողեցաւ անոր երկիրը դրաւել եւ այս իշխանին: Հայկական իշխանութիւնը դադրեցնել վերջնականապէս: Ասկէ տարի մը առաջ տեղի ունեցաւ մեծ երկրաշարժը, որու հետեւանքով կործանեցան Սամուսատ, Հարսն-Մօուր, Քեսուն, Ռապան եւ Մարաշ քաղաքները, եւ քառասուն հազար մարդ մեռաւ. նմանապէս կործանեցան Բարսեղեանց եւ Յեսուանց վանքերը եւ բազմաթիւ կրօնաւորներ մեռան, որոնց մէջ Գրիգոր Մաշկեւոր, երեւելի վարդապետը⁴⁶:

44. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, ԱՅԳ, էջ 608:

45. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԱՅԳ, էջ 324:

46. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԱՅԳ, էջ 333:

Ուրեմն այս առաջին եւ գլխաւոր վկայութենէն ծանօթ է, որ Գրիգորիսի ընտրած նոր կաթողիկոսարանը Ծով դղեակ կը կոչուէր: Բայց թէ ե՞րբ հոն փոխադրուեցաւ՝ բացայայտ վկայութիւն մը չկայ:

Չամչեան կը համարի որ այս փոխադրութիւնը տեղի ունեցած ըլլայ 1125ին. իրեն կը հետեւի Ալիշան: Մինչ Օրմանեան, որուն կը հետեւին նաեւ Յակոբեան եւ ուրիշներ, 1116ին կը համարին թէ եղած ըլլայ Աթոռի փոխադրութիւնը: Այս թուականին համաձայն ենք մենք ալ, նկատած որ Ներսէս Շնորհալին, որ իր Վիպասանութիւնը դրի առաւ 1121ին, յետ նշելու Գրիգորիսի կաթողիկոս ընտրուելու պարագան, կ'աւելցնէ.

Ձորաբարէլ երկրորդ եղեալ
Եւ ըզցրուեալսն ժողովեալ
Ըզմայր որդւովք իւրովք բերկրեալ
Յերուսաղէմ նոր վերածեալ»⁵⁰:

Այս «նոր Երուսաղէմ»ը, ուր Գրիգորիս փոխադրեց իր ընտանիքը կաթողիկոս ընտրուելէն ետք եւ 1121էն առաջ, ուրիշ տեղ չի կրնար ըլլալ եթէ ոչ այն դղեակը, որ գնեց եւ յարմարեց իբրեւ կաթողիկոսարան, եւ հայրենի դղեակին յիշատակով Ծով անուանեց: Վասն զի մինչեւ իր ընտրութիւնը ան կը գտնուէր Կարմիր վանք եւ ընտանիքն ալ հաւանաբար Գող Վասիլ իշխանի մօտն էր. բայց անոր մահէն ետք աստանդական կը տարուբերէր, Շնորհալիի ըսածին համաձայն⁵¹: Ուստի Գրիգորիս ընտրուելէն անմիջապէս ետք եւ համադրային ժողովը գումարելէն յետոյ, մտածեց նոր կաթողիկոսարանի մասին, որ պիտի ըլլար նաեւ իր ընտանեկան պատսպարանը, ինչպէս կը շնչէր նոյն Շնորհալին, ըսելով. Ջոր սեփական իմքեան շինեալ. կամ ալ ուրիշ տեղ. Որ սեփական մեր էր տեղի⁵²:

Ամէն պարագայի՝ ոչ մէկ վկայութիւն կայ թէ այդ դղեակին մէջ կը բնակէր իր եղբայրը Վասիլ, որմէ ինք ստացած էր եւ իրեն համար կաթողիկոսարան շինած, ինչպէս կ'ենթադրեն Օրմանեան եւ իրեն հետեւելով Յակոբեան⁵³: Ընդհակառակն Կիլիկիոյ Տարեգրքին վկայութիւնը կը հաստատէ ու կը լուսարանէ Շնորհալիի ըսածները. «Ձայսու ժամանակաւ, կը գրէ յիշեալ Տարեգրքը, սուրբ կաթողիկոսն Հայոց Տէր Գրիգորիս կայր ի փոքրագոյն դղեակն Ծովք, ի սահման Տլքոյ, զոր ստացեալ էր սուրբ Հայրապետն գնոց ի Բրին-

50. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Ամդ, էջ 805-8:

51. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Ամդ, էջ 804:

52. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Ամդ, էջ 241, և ՏԱՇԵԱՆ, Յուդակ Զեռագրաց, Վիեննա, 1895, էջ 513-4:

53. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, Ա., էջ 1357: ՅԱԿՈԲԵԱՆ, Ս. Ներսէս Շնորհալի, Երեւան, 1964, էջ 40:

ձէն Անտիոքայ եւ ԺԵ դեղ շուրջ, ի Կֆի դահեկան. եւ եկեալ բնակէր հանդերձ եղբարն Տէր Ներսէսիւ եւ աշակերտօքն եւ ամենայն կահիւ սրբոյ Աթոռոյն, եւ ամենայն ազգայնօքն իւրեանց»⁵⁴:

Թէ ինչ առիթով եղած էր այս փոխադրութիւնը, անոր մասին ալ չեն խօսիր պատմական յիշատակարանները: Բնականաբար թուականին հետ կապուած են վերի հեղինակներու բերած շարժառիթները: Ալիշան, որ 1125ին դրած է Ծովք փոխադրութեան թուականը, զայն կը կապէր Անին Փատուին իշխանէն դրաւուելուն. որովհետեւ կը խորհրդածէ ան, թէ Գրիգորիս ծրագիր ունէր Աթոռը Անի փոխադրելու, որուն համար բանադնացութիւններ ալ ըրած էր, բայց վերոյիշեալ թուականին Փատուին եկաւ ու գրաւեց Անին, եւ ան այլ եւս իր ուշադրութիւնը ուրիշ տեղ դարձուց. այսինքն՝ ըստ Ալիշանի կարծիքին, իր ծննդավայրը Ծով դղեակ տեղաւորուեցաւ: Բայց մենք տեսնեմք թէ երկու եղբայրներուն ծննդավայրը եղած էր Ձորերդ Հայքի մէջ գտնուող Ծովք դղեակը: Իսկ նոր կաթողիկոսարանը փոխադրուեցաւ Այնթապի հիւսիս արեւմուտքը, Տլուք դաւառի մէջ փոքրիկ դղեակ մը, որ Գրիգորիս գնեց Անտիոքի իշխանէն վաթսուն հազար դահեկանի, շրջակայ 15 դիւղերով, եւ հոն դեռեղեց թէ՛ կաթողիկոսարանը եւ թէ՛ իր ընտանիքը: Եւ այս առթիւ այդ անանուն դղեակին Ծով անունը դրուեցաւ, ի յիշատակ իրենց հայրենական կալուածին:

Օրմանեան նկատի առած է որ Պաղտին Եդեսիոյ լատին իշխանը դրաւելով Գող Վասիլի երկիրը Լեւոնի եղբոր Թորոսի մեղսակցութեամբ. «Հայրապետական աթոռին զգացած վնասը Լատին իշխանութեան ենթակայ մնալն էր»: Յակոբեան, կ'երեւի այս խօսքերուն տը պաւորութեան տակ, կը համարի թէ «Գրիգորիս կաթողիկոս ոչ մի կերպ չէր ուզում ենթակայ մնալ Լատին իշխաններին ներքոյ»⁵⁵: Որմէ կը հետեւցնէ թէ 1115ին, երբ Պաղտին Քեսունը գրաւեց, Գրիգորիս կը հետեւցնէ թէ 1115ին, երբ Պաղտին վանքը եւ փախադրուիլ Ծովք, խուորոցած ըլլայ թողուլ Կարմիր վանքը եւ փախադրուիլ Ծովք, խուսափելու համար Լատին իշխաններու ենթակայ ըլլալէ:

Այս շարժառիթը իբրեւ պատճառ կաթողիկոսարանի փոխադրութեան, պատմական նոյն ժամանակի մտայնութեան չի համապատասխաներ. քանի որ Տլուք դաւառը այդ ատենները Անտիոքի իշխանին ենթակայ էր եւ Գրիգորիս իրմէ գնեց յիշեալ բերդը: Ուրեմն ոչ թէ Լատին իշխաններէն խուսափելու համար կը տեղափոխուէր, այլ գուցէ կը նախընտրէր աւելի բարեկամ ու բարեացակամ լատին իշխան մը, ուրիշ աւելի անգուր իշխանէ մը, ինչպէս էր այդ ատեն Պաղտին: Արդարեւ ան այս թուականին (1115-6) կ'արշաւէր Գող Վասիլի

54. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Տարեգրք, էջ 161:

55. ՕՐՄԱՆԵԱՆ, Ամդ, էջ 1357: ՅԱԿՈԲԵԱՆ, Ամդ, էջ 41:

Քահանայական ձեռնադրութեան առթիւ Գրիգորիս իր եղբոր՝ Ներսէս անունը տուած պէտք է ըլլայ, ինչպէս Լամբրոնացիին կ'ակնարկէ երբ կ'ըսէ. «Ներսէս գաւառն Գաւառնոյն Կոչէ, եւ իմաստիւք զնա վարժէ»⁶²: Անշուշտ հոս Գաւառնոյն բացատրութեան մէջ Ներսէս Պարթեւը կ'ակնարկէ:

Քահանայական ձեռնադրութեան շնորհքին ազդեցութեան տակ՝ ան բոլորովին կը նուիրուի աղօթքի եւ ճգնողական կեանքի. յատկապէս կը շեշտուի իր կենսադրէն թէ յաճախակի պատարագ կը մատուցանէ, ինչ որ այդ ատենները հաղուադէպ երեւոյթ էր.

«Նոյն աղօթիցն պարապէ,
Զանձն ի փրկչին խաչ հեղուսէ
Պատարագել ոչ դադարէ,
ԶՅիսուս ընծայ Հօր նուիրէ
Որ յայս պատիւըս նախ ելանէ
Ճրգնողական գիրըս գըրէ
Պայծառ զմարմինն իւր չարչարէ,
Ի յանդադար պահըս ճընչէ»⁶³:

Երիտասարդ արեղան աստուածային սիրով տոգորուն, օրէ օր կը պայծառանար սրբութեամբ եւ տեսնողներուն հիացմունքի եւ բարի օրինակի առարկայ կը դառնար, ինչպէս կը խորհրդածէ իր կենսագիրը. «Որոյ անմարմնաբար եւ աստուածայնապէս սպասաւորեալ մեղսաքաւիչ եւ կենարար սուրբ խորհրդոյն, օրինակ բարեացն տայր զանձն բաղմաց եւ նախանձելի լինէր ողջախոհ մոլորացն ի բարիս»⁶⁴: Աղօթքի եւ ճգնողական կեանքի նուիրումը ամուլ եւ անդործ վատնումը չէ ժամանակի, այլ Աստուծոյ մերձենալու անհրաժեշտ պայման եւ ընկերութեան օգտակար ըլլալու ազդու միջոց մը, ինչպէս համոզուած էր Ներսէս, որ կրօնաւորներու ուղղած իր յորդորներուն մէջ կը գրէր. «Որ սիւնք էք աշխարհի եւ պարիսպ ընդդէմ թշնամւոյն աղօթիւք եւ բարի վարուք, հրեշտակ ի մարմնի եւ աստեղը լուսաւորք յերկրի»⁶⁵: Սակայն գիտէ նաեւ թէ հայեցողական կեանքին սերտօրէն կապուած է դործը, եւ թէ պէտք է ժամանակը օգտագործել մերձաւորին բարիք ընելու համար՝ ստացած աստուածապարգեւ ձիրքերուն համեմատ.

«Հաւատարիմ ծառայ լինէր
Զքանքարն ի դործ վարուց ածէր».

62. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Աճ, էջ 306:

63. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Աճ, էջ 306:

64. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Վարք, Սոփերք ԺԴ., էջ 33:

65. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Նամականի, էջ 64:

Առատապէս ալոց շնորհէր
Ի թիւ ի նոյն շահ ընդունէր:
Սա խոհական բանն որ խօսէր,
Յնդել ի յօղն ոչ ախորժէր.
Ի վար երկոց մարմնոց մըտէր,
Զաննիւթն ի նիւթ պարունակէր»⁶⁶:

Ահա այս մտահոգութենէ շարժած, որ մտածածը եւ խօսածը չցնդի, գրի առաւ «Վիպասանութիւն» կոչուած 1600 տողոց գործը, որ եթէ գրական արժէքով չի կրնար պարծիլ, բայց իբրեւ պատմական յիշատակարան՝ ունի իր առանձին կարեւորութիւնը: Վասնդի տաղաչափեալ ձեւով ան Պահլաւունի ընտանիքին պատմութիւնը կը հիւսէ, կապելով Գրիգոր Լուսաւորչի եւ կը հասցնէ մինչեւ 1121 թվականը, մանրամասն խօսելով իր անմիջական նախնիքներու եւ ընտանիքի անդամներու մասին, ինչպէս յառաջաբանին մէջ կ'ըսէ.

«Սկսանելով յայսմ տառի
Ի նախահարսն իմ ըստ կարգի.
Թէ ոյք էին եւ կամ ուստի,
Եւ կամ յորում ժամանակի»⁶⁷:

Անշուշտ Ներսէս կը շարունակէր զարգանալ իր ուսումներուն մէջ, առանձնաբար կարգալով եւ սերտելով ինչ որ նախնիք գրած ու թարգմանած էին: Այս աշխատասիրութիւնը տուաւ անոր այն խոր եւ ընդարձակ ծանօթութիւնը հայկական բոլոր գիտելիքներու մասին, որ կը յայտնուի իր գրութիւններուն մէջ: Եւ եթէ ինքը կը նշէ թէ անկատար էր իր գիտութիւնը.

«Զի հրահանգից վարժարանի
Զեմ տակաւին ներկուռ բանի.
Յաթենականըն քաղաքի
Զանձն իմաստիւք ոչ կըթեցի...»⁶⁸:

ասով ան կ'արտայայտէ իր բոլոր տեսչը գիտութեան ու զարգացումի հանդէպ, որ ամէնէն կարեւոր ազդակն է յառաջադիմելու համար, եւ յաճախ բաւարար՝ լրացնելու վարժարանի պակասը: Իր կենսագիրը կը նկարագրէ անոր անխոնջ վաստակը զարգանալու՝ ըսելով. «Ոչ ուրիշ կը զարգանայ անոր անխոնջ վաստակը, այլ անդադար ժուժկալութեամբ կըթուլթեան յաղթս, յընթերցումն աստուածային տառից, եւ միշտ

66. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Աճ, էջ 307:

67. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բաճիկ չափաւ, էջ 541:

68. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Աճ, էջ 540:

յարակայ ի նոյն քննութիւն. ուստի ընկալաւ զչնորհս գիտութեան ի Հոգւոյն սրբոյ»⁶⁹: Ճիշտ է որ Ներսէս չունեցաւ պատեհութիւնը իր նախահայր Գրիգոր Մաղիստրոսի նման յունական դարգացում ստանալու եւ հաւանաբար անտեղեակ էր անոր եւ ուրիշ օտար լեզուներու: Այս պատճառով անոնցմէ գրութիւններ թարգմանելու պարագային՝ կը դիմէր գիտցողներու եւ ինք կը սրբագրէր հայերէնի շարադրութիւնը, ինչպէս պիտի տեսնենք քիչ ետք:

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ալիշան, որ մանրամասնօրէն վերլուծած է Շնորհալիի կեանքը, կը խորհրդածէ թէ Վիպասանութիւնը շարադրելէն ետք, «որ է 1121 թուականէն մինչեւ 15 տարի երիտասարդութեան միջոցը ծածկուած կը մնայ մեզմէ. պատմական յիշատակ մը չենք գտած այս տարիներուն, այլ կը համարինք թէ ծածկուած ըլլայ խորհրդական ու սրբազան առանձնութեան ու լուութեան մէջ»⁷⁰: Յակոբեան տարօրինակ կը գտնէ Ալիշանի այս խորհրդածութիւնը անոր համար որ «Շնորհալու եռանդով լեցուն ու գործունեայ կեանքը միանգամայն անհամատեղելի է ճգնաւորի մենակեաց, անդործ կեանքի հետ»⁷¹: Անշուշտ տարօրինակ պիտի չգտնէր յարգելի հեղինակը, որ Ներսէսի կեանքը այնքան սիրով ու եռանդով ուսումնասիրած է, եթէ ծանօթ ըլլար ճգնողական ու մենակեաց կեանքի առաւելութիւններուն, ինչպէս քաջածանօթ էր Ալիշան, որ Շնորհալի պէս բանաստեղծի խառնուածք ունէր եւ եռանդով լեցուն ու գործունեայ կեանք վարեց, խոստովելով դատարկութենէ այն աստիճան՝ որ օրուան բոլոր վայրկեանները գիտէր օգտագործել: Եւ ինչպէս Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացիի եւ անոնց նման Մեսրոպ Մաշտոցի պէս գործունեայ եւ եռանդուն մարդիկ, նախ քան գործի նետուիլը, ատեն մը առանձնացան՝ Աստուծոյ աւելի մօտենալու համար, շատ լաւ Ներսէս ալ կրնար նոյն օրինակին հետեւած ըլլալ:

Այնուհանդերձ անհաւանական չենք գտներ Յակոբեանի այն ենթադրութիւնը թէ Ներսէս այս շրջանիս Արեւելք գացած ըլլայ յատուկ առաքելութեամբ մը, այսինքն կաթողիկոսական աթոռը Անի կարենալ փոխադրելու պայմանները քննելու եւ հող պատրաստելու համար. եւ այս առթիւ հոն մնացած ըլլայ ատեն մը, իր ուսումները կատարելագործելու, արեւելեան Հայաստանի անուանի վարդապետականներու մէջ: Այս ենթադրութեան հիմ կրնայ ըլլալ Ալիշանի

69. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Վարք, Ամդ, էջ 34:

70. ԱԼԻՇԱՆ, Շմորիալի եւ Պարագայ իւր, էջ 94:

71. ՅԱԿՈԲԵԱՆ, Ներսէս Շմորիալի, Երեւան, 1984, էջ 42:

մատնանշած Սամուէլ Անեցիի վկայութիւնը թէ Գրիգորիս կաթողիկոս ծրագիր ունեցած է հայրապետական աթոռը Անի փոխադրելու եւ այդ ուղղութեամբ բանակցութեան մտած Անիի իշխան Ապուսուարի հետ: Բայց երբ Փատլուն Անեցիներու գործակցութեամբ եկաւ դրաւեց Անին, այդ ծրագիրը ջուր ինկաւ: Յակոբեան կը համարի որ այս բանադնացներու մէջ Ներսէս գլխաւոր պատգամաւորը եղած ըլլայ եւ այցելած Արեւելեան Հայաստանի նշանաւոր վանքերը, Գանձասարի, Հաղբատի, Սանահինի, Գետիկի, Հաղարծնի, Մաքենոցաց եւ Թեղենեաց⁷²:

Իսկ եպիսկոպոսական ձեռնադրութեան նկատմամբ՝ հարկ է նշել թէ Լամբրոնացիի ներբողեանը եւ Ներսէսի անանուն կենսագիրը անմիջապէս կը կցեն քահանայական ձեռնադրութեան: Եւ այս տեսակէտով իրաւացի է Յակոբեանի վարկածը թէ Ներսէս եպիսկոպոս օծուած ըլլայ 1125ի ատենները, եւ ոչ թէ Չամչեանի ըսածին համաձայն 1135ին կամ Ալիշանի համեմատ՝ 1130ին: Արդարեւ Լամբրոնացի իր ներբողեանին մէջ կը գրէ.

«Հռչակ յաշխարհ այս հասանի,
Անունն յոլորտս երկրի գովի,
Յայտնի իմաստն արտափայլի,
Ախորժելի բանքն լըսի:
Տեսեալ մանուկն ծերունի,
Հայրապետին հարազատի,
Պատիժ անձինն իւր վարկանի,
Թէ գրուանաւ լոյսըն ծածկի:
Աղբրսանօք առ նա խօսի
Ածել զչնորհն ի գործ բանի,
Նըստել յաթոռ վարդապետի
Եւ հովուութեան կալ ի կարգի»⁷³:

Իսկ անանուն կենսագիրը նմանապէս յետ յիշելու քահանայական ձեռնադրութիւնը, անմիջապէս կը յարէ. «Յետ որոյ բազում եպիսկոպոսաց եւ սուրբ արանց ժողովով մեծապայծառ հանդիսիւ եպիսկոպոսական արժանաւոր ձեռնարկութեամբ եւ ընդունողութեամբ»⁷⁴:

Գրիգորիս կաթողիկոս իր կրտսեր եղբայրը եպիսկոպոս ձեռնադրելով ուզեց անշուշտ աւելցնել անոր պատասխանատուութիւնը հայրապետական աթոռի գործերուն մէջ: Եւ քանի որ Մովսէս փոխադրուած էր եւ հոն «բնակէր հանդերձ եղբարն Տէր Ներսէսիւ եւ ա-

72. ՅԱԿՈԲԵԱՆ, Ամդ, էջ 43-44:

73. Ն. ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Ամդ, էջ 307:

74. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Վարք, Ամդ, էջ 33:

կայաքանութեանց հաւաքածոն, որ կը կարգացուէր ժամերգութեան ընթացքին՝ սուրբերու տօներու առթիւ: Այս դործը սկսած էր մեծ վկայասէր կաթողիկոսը, որուն շարունակող եղան Գրիգորիս եւ Ներսէս: Անոնց դործը եղաւ ոչ թէ նոր սուրբեր աւելցնել տօնացոյցին վրայ, այլ հայ տօնացոյցի սուրբերուն վկայաքանութիւնները ամբողջացնել, թարգմանելով կամ լաւ եւս թարգմանել տալով յունարէնէ եւ ասորերէնէ, եւ ապա այդ թարգմանութիւնները Ներսէս կը սրբազրէր ու կը կոկկէր: Այսպէս եղած են Գրիգոր Լուսաւորչի Ներբողեանը՝ դրուած Յովհան Ոսկեբերանէ, որ «Ի թուականիս ՇՂ (1141) թարգմանեցաւ ի յունականէն ի մերս ի ձեռն Աբրահամու վռամարտիկոսի ի հին եւ յեղծած աւրինակաց. իսկ յարմարեցաւ ըստ բանից դրութեան եւ բառից յիմոյ նուաստութենէ Ներսէսի, հրամանաւ Տեառն իմոյ եւ հարազատի Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի»⁸⁶: Տարագոս եւ Պրորոս եւ Անդրոնիկոս վկաներու վկայաքանութիւնն ալ նոյն ձեւով թարգմանուած ու սրբազրուած է Ներսէսէն, ինչպէս կը կարգանք հետեւեալ յիշատակարանին մէջ. «Թարգմանեցաւ ճառ սրբոց վկայիցս ի թուականիս ՈԶ (1157) ի ձեռն Ներսէսի, Հայոց Կաթողիկոսի, յարմարութեամբ բանի եւ դրութեամբ բառի: Իսկ յունականէն ի ձեռն քահանայի Կոստանդեայ, ի մերս փոխադրելով»⁸⁷: Ծանօթ է նաեւ Ս. Սարգիս զօրավարի վկայաքանութեան պարագան, որ թարգմանուեցաւ ասորերէնէ. «Թարգմանեցաւ ճառս յասորւոյն ի մերս ի ձեռն Միխայելի ուրումն կրանաւորի, քահանայի ասորւոյ, եւ յարմարեցաւ ըստ կարի մերումս լեզուի շարադրութեամբ ի Ներսիսէ եպիսկոպոսէ, յեղբօրէ կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, ի թուականիս Հայոց ՈԷ (1158)»⁸⁸:

Ներսէս իր եպիսկոպոսական պաշտօնին բերումով եւ իր եղբօր օժանդակելու պարտականութենէ շարժած՝ ձեռնարկած էր այս բոլորին. սակայն իբրեւ ինքնաբերական աստեղծ եւ զգայուն հոգի մը՝ չէր կրնար ծածկել առած քանքարը եւ չարձանադրել իր հոգեկան ապրումները: Եւ ահա երբ առիթը կը ներկայանար՝ ան գրի կ'առնէր իր հոգեկան ներշնչումները: Այսպէս, երբ Զանգի արաբ իշխանը 1141ին Եդեսիան գրաւեց, բոլոր քրիստոնեաներուն վրայ խոր տըպաւորութիւն ձգեց: Շնորհալիի եղբօրորդին Ապիրատ, որ ներկայ եղած էր աղէտին, եւ լաւ կը ճանչնար իր հօրեղբօր ձիրքերը, խնդրեց որ գրի առնէ այս ողբալի դէպքին պատմութիւնը: Ներսէս յաջորդ տարին շարադրեց այն երկարաշունչ քերթուածը, որ «Ողբ Ե-

դեսիոյ» անունով ծանօթ է եւ Շնորհալիին դրական գլուխ դործոցը կրնայ կազմել, բանաստեղծական ներշնչումով, դրական զգեստաւորումով, պատմական ու եկեղեցական ակնարկներով, եւ իր ինքնատիպ կառուցուածքով:

Ասկէ ետք ան դարձեալ իր եղբօրորդւոյն խնդրանքին վրայ ձեռնարկեց «Բան հաւատոյ» կոչուած քերթուածին: Գրութիւնը զուտ աստուածաբանական բնոյթ ունի եւ քրիստոնէական վարդապետութեան ուսուցման համար դրուած կ'երեւի: Իր պարզութեամբ, յստակութեամբ եւ խորութեամբ անդերազանցելի դործ մըն է, զոր ան գրած է իր սրտին բնական փափաքին գոհացում տալու եւ միաժամանակ կատարելու Ապիրատի խնդրանքը.

«Բայց փափաքումն ոգւոյն բնական
Ստիպեաց քան զոյժըս գիտական.....
Եւ խնդրողին զբանըս զըրոյ
Երիցագոյն եղբօր որդւոյ
Որ Ապիրատ յորջորջելոյ»⁸⁹:

Գրութիւնը աւարտած է ճիշտ այն ատեն, երբ Իկոնիոյ Մասուտ սուլտանը կ'արշաւէր Մարաշի կողմերը, եւ Ծով դղեակ այլեւս ապահով պատսպարան մը չէր կրնար ըլլալ կաթողիկոսարանին: Եւ այդ պատճառով Գրիգորիս կը փոխադրուէր Հռոմկլայ 1151ին:

Այսպէս ուրեմն շուրջ երեսունհինգ տարի Ծով դղեակի մէջ դործեց Ներսէս, ծաղկեցնելով Եկեղեցին եւ իր շուրջ հաւաքելով աշակերտներու եւ վարդապետներու բազմութիւն մը, որոնք իրենց կարգին պիտի ծաւալէին այդ լոյսը թէ՛ Կիլիկիոյ եւ թէ՛ Մեծ Հայքի զանազան վանքերու մէջ: Իսկապէս՝ Ներսէսի ձեռքով եւ իր Կաթողիկոս եղբօր միջոցով Հայրապետական Աթոռը սկսաւ վերականգնել եւ պայծառանալ Ծովքի մէջ, բայց իր լրումը պիտի ստանայ Հռոմկլայի մէջ:

(Շար. 1)

Հ. Պ. ԱՆԱՆԵԱՆ

86. Գ. ՅՈՎԱԿԻՄԻԱՆՑ, Յիշատակարանք, էջ 353-4: — Ըստ Սոփերէ ԺԴ-ի Ղաւմարտիկոս է թարգմանիչին անունը:
87. Գ. ՅՈՎԱԿԻՄԻԱՆՑ, Ամդ, էջ 368:
88. Գ. ՅՈՎԱԿԻՄԻԱՆՑ, Ամդ, էջ 369-70:

89. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ չափաւ, էջ 230, 244: